

լով, և այլն, ու միևնույն միջոց թղթակցեցաւ Մխարի, հզօնեցաւ հայկական թերթերը տարա-
ծել իւր ծննդավայրի ամէն հայերուն մէջ, բայց
ստոնցմով չզոհացաւ ինքը, ըմբռնեց թէ ազգա-
սիրութեան հուրը ծաւալելու միակ միջոցն էր՝
հայ մանկտիկն հայերէն լեզուով դաստիարակելն,
այդ լեզուն սորվեցնելն և սիրցնելն:

Փոխադրուելով Թիֆլիզ, 1883ին հիմնեց Այ-
րիի մանկական թերթը, ու զայն պնդաբար-



դելով բազմաթիւ պատկերներով, նկարներով,
բարոյական ու իմաստնալից գրութիւններով
(որոնք ամէնէն ալ ձեռնհաս անձեղ կը պա-
տրաստուէին), Ռուսահայ մանկտուր անձնա-
նուէր դաստիարակը եղաւ: Իսկ 1890ին ՏԱ-
ՐԱԶ պատկերազարդ շաբաթաթերթին ևս հրա-
տարակելով և չքեղ բազմագունի մեծադիր պատ-
կերներու նուէրներն հաստատելով՝ իրաւամբ
կոլկասահայ մամուլի զարդը ու փառքը կազ-
մեց: Մինչև ցարդ հրատարակած Ալբիւր-Տա-
րագ և բացառիկ թերթներու 50 հատորները երբ
ձեռք կ'առնու մարդ ու անոնց սննդալից բո-
վանդակութիւնը, բիրաւոր պատկերները կը
դիտէ, հրճուանքով կը լցնուի ու անգամ մը ևս
կը սփանչանայ զանոնք արտադրող Նազարեանի
վրայ՝ որ իրեն պատուաբեր փառքի կոթող մը
կանգնած է:

Բայց դուք երբ գիտնաք թէ Ալբիւրի 25 ա-
մնայ կենաքը Տելեմաքայ արկածներէ աւելի վը-
տանգներու ենթարկուած, ու միայն Նազարեանի
հարստութիւնն ու առողջութիւնը զոհուելով և
իւր Տիկին մօր խրախուսանքով և խորհուրդ-
ներով փրկուած է, դուք պատկառաւոր կը զգաք
հանդէպ այսպիսի որդւոյ և այնպիսի մօր:

Վակայն Նազարեանի գործունէութիւնը միայն
Ալբիւր-Տարագի մէջ չի շրջափակուիր, իր ազ-
գօգուտ ձեռնարկները դեռ բազմաթիւ են. Կիւ-
ղասիից, Ստոյնպոլիսէ, Պարթիզ մոդա-
նէր, իլլիւստրատիոն, Գաստիարակ, Ալբիւր Բ.
Խաժիկ, ինքը հրատարակած է՝ իր յաւելումա-
նէր Ալբիւր-Տարագի: ԱՆՎՆՍՈՒՍ ուստերէն ածա-
նագին լրագիրը մէկ ու կէս տարի հրատարա-
կած մանուկներու, չափահասներու և ժողո-
վուրդի իւր ընթերցման գիրք՝ իր տպարանէն
լոյս տեսած են (6) հատորներ. բազմաթիւ օրա-
ցոյցներ, Ալբոմներ, գունագեղ մեծադիր նկար-
ներ, կենդանագիրներ և այլն, և այլն:

Ամենօրեայ հայերէն լրագիրներ եղած են
Կոլկասի Առաւօտ, Կոլկասի կէս օր, Կոլկա-
սի երեկոյ և ռուսերէն Կոլկասի Պոյոտեն: Դար-
ձեալ ինքն է բացած 1906ին Մամուլի Բիւրօ
և Գրական - Գիտադիտական Մասն ընդարձակ
ընթերցարանով:

Ջանազան հայ-քաղաքական ինդիւրներու մաս-
նակցելով միշտ օգտակար եղած է ազգին, նը-
պատած է դրամի, գրքերու, պարբերականնե-
րու նուէրներով ազգային կարօտեալներու:

1903ին վրէննա տեղի ունեցած միջնազգային
Մամուլի դաշնակցութեան տասնամեակը կա-
տարուելու միջոց՝ միակ հայ ներկայացուցիչը
Նազարեանը եղաւ, որ անդամ ընտրուելով այդ
դաշնակցութեան 1905ին Լիէժ և 1907ին Ի Պոր-
տոյ զումարուած ժողովներուն մասնակցեցաւ:
Իսկ 1908ին Բորդուգալի Մայրաքաղաք՝ Լիզ-
պոնայի մէջ Գրականութեան, Արուեստի և
Խաղաղութեան ցուցահանդէսը բացուելով հոն
ի ցոյց դրաւ Հայկական գրականութեան բաժի-
նը, ընտրուեցաւ արժանիքով՝ Գրագետներու,
Արուեստագետներու և Խաղաղութեան Միջազգա-
յին ընկերութեան պատուոյ անդամ, որուն բո-
վանդակ 160 միլիոն բնակչով Ռուսիոյ մէջ
Դոյստոյ և Կորթի արժանանցած են անդամակ-
ցիլ: Այժմ յիշեալ ընկերութիւնը և Բորդուգալի
12 զանազան ուսումնական հաստատութիւններ
զինքը անուանած են իրենց լիազօր ներկայա-
ցուցիչը Դոյստոյի Յօրէնանիին ժամանակ:

Ան այսպիսի Հայ անուան պատուաբեր անձ,
նաւորութեան հիմնած ԱՎԻԻԻԻ 25 ամեակը
մօտուելու միջոց, մենք կրկին և կրկին շնորհա-
լէրով շնորհապատկերներ կ'ուղղենք պատուա-
բան Յօրէնարին գնահատելով յինքն Նայ տա-
ղանդաւոր գործիչը:

Կը մաղթենք մօնել Աղամանդեայ Յօրէնանը:
Հ. ՆԵՐՍԷՍ Տ.

Սէրը այն Թեւն է՝ որ Աստուած տուած
է՝ մինչև առ ինքն բարձրանալու համար.
(ՄԱՐԿԷ ԱՐՏԵՆԵՅ)

Ո՞րն է կենաց առողջութիւնը պահպա-
նելու միջոցը. — Աշխատութիւնը:

Յարգէ որ յարգուիս: